

# PEARLS OF ARMENIAN HERITAGE

## ԻՆՉՈ՞Ւ ՆՈՐ ԿԻՐԱԿԻ



Նոր Կիրակին՝ Զատիկէն ետք յաջորդող Կիրակին է: Այս օրը խորհրդանշում է Աստուծոյ հետ ժողովուրդի նոր ուխտին կապի սկիզբը: Քրիստոնէական Եկեղեցին կը դառնայ «նոր Իսրայէլը»՝ Աստուծոյ ուխտի ժողովուրդը: Այս պարագային մեջ «Իսրայէլ» անունը աշխարհագրական տարածք չէ, այլ՝ ժողովուրդի մը հոգետը կոչումը՝ Աստուծոյ հետ ուխտի մէջ ապրելու:

Քանի որ այս օրը Զատիկէն ետք ութերորդ օրն է, ան կը կոչուի նաեւ Կրկնազատիկ, որ կ'արտացոլէ Զատկուան ուրախութիւնը ու Քրիստոսի յաղթանակը մահուան վրայ: Այդ օրը կը կարդացուի Յովհաննու Աւետարանի բացման հատուածը, որ կ'աւետէ թէ Յիսուս Աստուծոյ Որդին է, մարմին առած Բանը՝ Աղբիւրը կեանքի, Լոյսը աշխարհի եւ Յիմըր բոլոր ճշմարտութիւններու:

Յարութենէն ետք, աշակերտները, վախով եւ անորոշութեամբ լեցուն, կը փակուին սենեակի մը մէջ: Սակայն Յիսուս կը յայտնուի անոնց մէջը ու կ'ըսէ՝ «Խաղաղութիւն ձեզի»: Քրիստոս կը բերէ ոչ թէ զայրոյթ, այլ՝ սէր, խաղաղութիւն ու յոյս: Անոր ներկայութիւնը սարսափը կը

դարձնէ ցնծութիւն, վիշտը՝ քաջութիւն:

Ութ օր յարութենէն ետք, երբ Յիսուս յայտնուեցաւ Թովմաս առաքեալ կասկածանքով ընդունեցաւ Յիսուսի յարութեան լուրը: Բայց Յիսուս մօտենալով անոր սիրով ըսաւ՝ «Ձեռքդ դիր վերքիս ու մի՛ եղիր անհաւատ, այլ հաւատքով լեցուիր»: Թովմաս կը խոստովանի՝ «Տէ՛ր իմ եւ Աստուած իմ»: Յիսուս, մինչեւ իսկ կասկածողներուն կը մօտենայ ողորմութեամբ եւ հրաւերով՝ վերանորոգուելու եւ աճելու սիրոյ, ներումի եւ քաջութեան մէջ:

Նոր Կիրակին մեզի կը յիշեցնէ, թէ Քրիստոսի հետ միշտ կրնանք վերածնիլ: